

Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 34 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի վերանորոգում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի Եզնիկ Մոզանի անվան արհեստագործական մասնագիտական դպրոցի կառուցման լրացուցիչ փարձագիտական խորհրդատվություն և վերահսկողություն», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում», «Երևան քաղաքի Պյոտր Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի կահավորման 3-րդ փուլ» և «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի գյուղի տարածքում» «Ձատիկավան» ծրագրի շրջանակներում անաստագոմի վերակառուցման նախագծում» ծրագրերը.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի և Նորվեգիայի Բերգենի համալսարանի կենսաբանության ֆակուլտետների, մանրէների էկոլոգիայի բնագավառում համագործակցություն» ծրագիրը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի տարածքի բարեկարգում և կանաչապատում» և «Վեհարանի շենքի վերակառուցում» ծրագրերը.

«Երևանի Բենիամին Ժամկոչյանի անվան N 119 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր ուսումնական մասնաշենքի նախագծում և կառուցում» ծրագրի և Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-099-Ա որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» ծրագիրը.

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Գյումրի քաղաքի Շիշյանի անվան «Օկտետ» թիվ 6 երաժշտական դպրոցի շենքի կառուցում» ծրագիրը.

ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Նորավան գյուղի դպրոցի վերանորոգում» ծրագիրը.

Միջազգային բժշկական ծառայությունների հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագիրը, որի նպատակն է ստեղծել միջազգային չափորոշիչներին համապատասխան ժամանակակից բժշկական տեխնիկայով կենտրոն և բժշկական ծառայություններ մատուցել Սյունիքի մարզի և Արցախի սոցիալապես անապահով բնակչությանը.

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Կենցաղային սարքավորումների մատակարարում Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանների 20 համայնքների սոցիալապես անապահով ընտանիքներին ու մանկապարտեզներին», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքի հայ առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի կիրակնօրյա դպրոցի վերանորոգում», «Հայաստանի Հանրա-

պետության Գեղարքունիքի մարզի Ավազան համայնքի մրզի պահպանման սառնարանի համար սառեցնող հարմարանքի մատակարարում և տեղադրում», «Առողջ երեխա», «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի ներքին Բազմաբերդ համայնքին», «Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Ապարան, Արփա, Շենավան և Հարթավան համայնքների դպրոցներին», «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագած, Լուսազյուղ և Երնջատափ համայնքներին», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արփունք համայնքի խմելու ջրի խողովակաշարի կառուցում», «Գավառի պետական համալսարանի փորձադաշտում ջերմոցի կառուցում», «Լոռու մարզի Հոբարձի և Ախթալա համայնքներին մետաղապլաստե դռների, պատուհանների մատակարարում ու կահույքի մատակարարում Գարգառ համայնքին», «Լոռու մարզի Ճոճկան և Այրում համայնքների ոռոգման ջրագծերի ու Կոճաճկուտ համայնքի խմելու ջրի ջրագծի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այգեհովիտ և Ոսկևան համայնքների խմելու ջրի ջրամբարների վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Գողարքունիքի մարզի Լանջաղբյուր և Գեղարքունիք համայնքներին ոռոգման համակարգերի վերանորոգման համար խողովակների և կիսախողովակների տրամադրում», «Կենցաղային սարքավորումների մատակարարում Տալինի տարածաշրջանի 26 համայնքների սոցիալապես անապահով ընտանիքներին և մանկապարտեզներին», «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Դավթաշեն համայնքի դպրոցում ջեռուցման համակարգի տեղադրում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի գեղարվեստի դպրոցի տանիքի վերանորոգման նպատակով շինանյութի տրամադրում» 7 «Խաղահրապարակի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնք» ծրագրերը.

«Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգում» ծրագիրը.

Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» WE20110560 և Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» WE20120141 ծրագրերը.

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ծաղկահովիտի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացում» և «Բնակելի տան վերանորոգում» ծրագրերը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: